ՁԵՌՈՒՑՈՒՄՆ ԵՒ ՀՈՎԱՀԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՌԱՑ ԵՐԿԱԹՈՒՂԻՈՑ

Ահաւասիկ կը ներկայացնենք արուեստագիտաց 'ի պատկերի նորահնարդիւրին կերպ մը՝ տեղաշարժ մեքենային հրոյն ջերմութեան միջոցաւ ջեռուցանելու 'ի ձմեռան երկաթուղեաց կառքերը, ինչպէս նաև զովացնելու յամառան զով և անապական օդով։ Այս վախճանին հասնելու համար, կը գտնուի տեղաշարժ մեքենային առջեւի դին դէպ 'ի վեր ցցուած ձագառաձև գործիք մը, ծածկով փակեալ՝ յանձրևէ և 'ի ձիւնէ պաշտպանելու համար, ուսկից խողովակ մը կը մեկնի՝ անցնելով կատարային սակէն. որ երբ վառարանին սկիզբը կը հասնի՝ երկու մասի կը բաժնուի, որոնք կ'անցնին վառարանին երկու կողմերէն, և զուգահեռական դծով մինչև վերջին կառքը կը հասնին։



Ամեն կառքերն իրարու նման ունին իրենց առանձին խողովակները, որ նրա տարանց տակէն կ'անցնին, և դռնակով մը կը փակուին ու կը բացուին։ Զանազան կառաց խողովակաց իրարու հետ միութիւնը, յայտնի կը տեսնուի առաջիկայ պատկերին մէջ, որոնք կը հաղորդին իրարու հետ կակուղ նիւթոյ մը միջոցաւ, ինչպէս է, օրինակի աղագաւ, ձգական խէժ, որ ոչ կոտրելու վախ կու տայ և ոչ աւրելու։

Ջագառաձեւին բերնէն մտած օդն ջեռուցանելու համար, կը փաթութեն ըզկատարայն, զվառարանն և անոնց երկայնութեամբ ձգուած խողովակները՝ ջերմութենէ անվնաս փաթութով մը, և նոյնը կ'ընեն նաև այն խողովակաց՝ որ յարաբերութիւն ունին արտաքին ցուրտ օդոյն հետ։ Իսկ յամառան ընդհակառակն, կը վերնան բոլոր փաթոյթները, և այն ատեն զովացուցիչ օդն ընթանայ համարձակ բոլոր խողովակաց միջէն։

Արևելք՝ որ հիմա աշխուժութեամբ իր մեծամեծ քաղաքները կը կապէ իրարու հետ երկաթուղեաւ, կը յուսանք որ անտես չառներ այս նորահնար գիւտն, որ անհրաժեշտ կարեւոր է ուղևորաց հանգստութեանը։

———

digitised by A.R.A.R.@